ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի բժշկական կենտրոնի վերակառուցման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության Նախնական գնահատման հայտ

Կատարող՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ

Տնօրեն՝ Ս.Օհանյան

Երևան - 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ 4
1.1 Տեղեկություններ ձեռնարկողի մասին 4
Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը 6
1.2 Նախատեսվող գործունեության անվանումը ևնպատակը 9
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) 9
a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ 10
b. Կատարված աշխատանքների համառոտ բնուագիրը 11
c. Նախագծային լուծումների շրջանակներում նախատեսվել է 11
d.Վերակառուցվող մասնաշենքում նախատեսվել են 13
e. Ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմաններ 13
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ 14
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ 14
3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները 14
3.1.1. Երկրաբանություն 15
3.2. Կլիմա, օդի որակ և աղմուկ 15
3.2.1. Կլիմա 15
3.2.2 Օդի որակ 21
3.2.3. Աղմուկ 21
3.3 Սոցիալ-տնտեսական պայմանները 22
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ 25
4.1 Ռիսկերի գնահատում 25
4.2 Օդի աղտոտում 25
4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն 26
4.4. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն 27
4.5. Բնապահպանական միջոցառումներ 27
4.5.1. Մթնոլորտային օդ 27
4.5.2. Ջրային ռեսուրսներ 28
4.5.3. Հողային ռեսուրսներ 28
4.5.4. Աղմուկ 29
4.5.5. Կենսաբազմազանություն 29
4.5.6 Թափոնների և այլ նյութերի կառավարում 30

4.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն 30
4.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը 30
4.8 Փոխհատուցում 31
5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ 32
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ 33
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Տեղեկություններձեռնարկողիմասին

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքի Նարեկացի 61 հասցեում բժշկական կենտրոնի վերակառուցում
Նպատակը	Բժշկական կենտրոնի վերակառուցում
Նախագծի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	«Երևաննախագիծ» ՓԲԸ
Ձեռնարկողի հասցե	Քաղաք Երևան Փ. Բուզանդի 1/3
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	mail Yerpro@yandex.ru Հեռ. 56 27 11
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	Աշտարակ քաղաքի Նարեկացի 61 հասցե
Կառույցի ընդհանուր մակերեսը	5190,0 քմ
Հիվանդանոցային համալիրի կառուցապատման մակերես	3338,76 քմ

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում«Երևաննախագիծ» ՓԲԸ,որի հասցեն է ք. Երևան Փ. Բուզանդի 1/3: Գործունեության վայրը՝ ք. Աշտարակ, Նարեկացի 61 /հողամասի կադաստրային ծածկագիր՝ 01-010-0101-0002, վկայական N 01032018-01-0111/:

Երևաննախագիծ ՓԲԸ մտադիր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, ք. Աշտարակ, Նարեկացի 61 հասցեում գտնվող հիվանդանոցային համալիրի վերակառուցման նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա

ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ ստանալ շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի (21 հունիսի, 2014) հոդված 14-ի կետ 6-ի համաձայն, ք. Աշտարակ, Նարեկացի 61 հասցեում գտնվող հիվանդանոցային համալիրի վերակառուցման նախագծային փաստաթուղթը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման և փորձաքննության, քանի որ ընդհանուր կառուցապատվող տարածքի մակերեսը գերազանցում է 1500 մ^2-ը (կառուցապատվող հողամասի մակերեսը կազմում է 5190,0 քմ, իսկ հիվանդանոցային համալիրի վերակառուցման համար նախատեսված տարածքի մակերեսը կազմում է 3338,76 մ^2):

Ելնելով շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանից, նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Գ» կատեգորիայի, որի համար պահանջվում է նախնական գնահատման հայտի պատրաստում: Նախնական գնահատման հայտի բովանդակությունը մշակվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտը կարգավորող իրավական ակտերի պահանջների համաձայն:

Գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցութունների գնահատման և վերլուծության արդյունքներն ամփոփվել են սույն նախնական գնահատման հայտում: Գնահատման նպատակն է, նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում, շրջակա միջավայրի ու մարդու առողջության վրա հնարավոր վնասակար ազդեցությունների կանխատեսումը, կանխարգելումը, նվազեցումը կամ բացառումը:

Գործունեության իրականացման ընթացքում հիմնական բնապահպանական և սոցիալական ռիսկերն են՝

Օդային ավազանի աղտոտում՝ շինարարական աշխատանքների և շինարարական տեխնիկայի շարժիչների շահագործման ընթացքում,

Շինարարության փուլում մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստություն՝ մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից,

Շինարարական մեքենաների և տեխնիկայի աշխատանքով պայմանավորված տեղի երթևեկության խափանում,

Վերակառուցման նախագծի շրջանակներում նոր հողատարածքների յուրացում չի նախատեսվում,

Աշխատողների առողջությանը հասցվող վնաս՝ գործունեության իրականացման շինարարության և շահագործման ընթացքում:

Հայտում բնապահպանական ելակետային տվյալների հիման վրա առաջարկվել և ամփոփվել են վերը նշված ազդեցությունների և շրջակա միջավայրի մյուս

բաղադրիչների վրա կանխարգելմանն ու նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,

Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,

Տարածաշրջանի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,

Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,

Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,

Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի և հանրային քննարկումների արդյունքների (ներառյալ՝ արձանագրություն, մասնակիցների ցանկ տեսաձայնագրություն) ներկայացում շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում:

Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

Աշտարակ քաղաքի, Նարեկացի 61 հասցեում գտնվող հիվանդանոցային համալիրի վերակառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության

նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրութային փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում,վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում,

բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ, սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենք (2000) - կարգավորում է տնտեսական գործունեության վերահսկողության ստուգայցերի իրականացման ընթացակարգերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղեկատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14,15,16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

1.2 Նախատեսվողգործունեությանանվանումընպատակը

Նախատեսվող գործունեության անվանումն է՝Աշտարակ քաղաքի, Նարեկացի 61հասցեում գտնվող հիվանդանոցային համալիրի վերակառուցում: Հիվանդանոցային համալիրի վերակառուցման համար Աշտարակի քաղաքապետարանի կողմից տրվել է N 01/18-07/2-83357-972 Առ. 27.09.2019թ. նախագծման թույլտվությունը (ճարտարապետա-հատակագծային առաջադրանք):

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՍՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

a. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Գոյություն ունեցող 45 մահճակալ հզորությամբ բժշկական կենտրոնը տեղակայված է Աշտարակ քաղաքիՆարեկացի 61 հասցեում, համալիրն ունի ֆիզիկապես և բարոյապես բարձր մաշվածության աստիճան:

Կառույցի (մասնաշենքերի, շենք-շինությունների) ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 5190.0քմ:

Վերջինիս կազմում գործում են՝

Կաթսայատուն՝ 256.1 քմ,

Ջրավազան՝ 13.9 քմ,

Փայտյա տնակ՝ 115.27քմ,

Արխիվ՝ 77.5քմ,

Պահակատուն՝ 6.81քմ,

Պոլիկլինիկա՝ 1015.04քմ,

Տրանսֆորմատորային կայան՝ 44.19քմ,

Հիվանդանոց՝ 3338.76քմ,

Փայտյատնակ՝ 81.8քմ,

Հիվանդանոց՝ 190.48քմ,

Պարիսպ՝ 5.84քմ,

Պարիսպ՝ 42.42քմ:

Ըստ ակնադիտական ուսումնասիրության՝ բժշկական կենտրոնի մասնաշենքերի գերակշիռ մասն անմխիթար վիճակում է, ծավալահատակագծային լուծումները չեն համապատասխանում արդի նորմատիվ պահանջներին: Համայնքի կարիքի և նախատեսվող ծախսերի գնահատմամբ.

Բժշկական կենտրոնը ենթակա է վերակառուցման (սեյսմազինվածության միջոցառումների կիրառմամբ) և օպտիմալացման,

Գոյություն ունեցող մահճակալային ֆոնդն առաջարկվել է կրճատել մինչև 32:

ՀՀ առողջապահության նախարարության առաջադրանքի համաձայն՝ առաջարկվել է 3338.76քմ մակերեսով վերակառուցվող մեկ մասնաշենքում տեղակայել հիվանդանոցային և պոլիկլինիկական ծառայություններ, կենտրոնը հագեցնել ժամանակակից բժշկական սարքավորումներով, կահույքով և պարագաներով:

b. **Կատարված աշխատանքների համառոտ բնուագիրը**

- ձեռք է բերվել տեղանքի ինժեներաերկրաբանական հետազննության եզրակացություն, կատարող 'ՄԵԼ ՀՈՎ' ՍՊԸ, պայմանագիր ՈԵՆ-ԻԵ N 19/06 առ 16.10.2019թ.:

- հետազննել գոյություն ունեցող մասնաշենքի (-երի) տեխնիկական վիճակը՝ վերջիններիս վերակառուցման հնարավորության և շահագործման նպատակահարմարության վերաբերյալ համապատասխան հիմնավորումներ ձեռք բերելու համար, կատարող «Քաղաքաշինական ծրագրերի փորձագիտական կենտրոն» պայմանագիր ՈԵՆ-ՏՀ-19/08 առ 22.10.2019թ., եզրակացություն առ 13.11.2019թ.:

- ճարտարապետահատակագծային առաջադրանքի (այդ թվում տեխնիկական պայմանների) և ինժեներաերկրաբանական հետազննության ուսումնասիրության արդյունքներով մշակվել է 3338.76քմ մակերեսով բժշկական կենտրոնի վերակառուցման արդիական նախագծանախահաշվային փաստաթղթեր,

- նախագծի ընթացիկ աշխատանքներն աշխատանքային կարգով համաձայնեցվել է պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումները:

c. Նախագծային լուծումների շրջանակներում նախատեսվել է

-բժշկական կենտրոնի մասնաշենքի կոնստրուկտիվ համակարգի վերակառուցում՝ սեյսմազինվածության միջոցառումների կիրառմամբ,

- բժշկական կենտրոնի վերակառուցվող մասնաշենքում ներքին սառը և տաք ջրամատակարարման, ջեռուցման, էլմատակարարման (այդ թվում պահուստային-ավտոնոմ), գազամատակարարման, օդափոխության, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման, սառեցման և

հովացման, տեխնիկական անվտանգության համակարգեր, մասնաշենքի արդիական ներքին և արտաքին հարդարում,

-անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան տեխնիկական պայմանի առկայությամբ, էլեկտրական ենթակայան կամ էլեկտրամատակարարման մալուխագիծ,

-բժշկական կենտրոնի վերակառուցվող մասնաշենքի համալիրում հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ միջոցառումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն, ըստ անհրաժեշտության ***(եթե շենքը նախագծվելու է երկու և ավելի հարկայնությամբ, կամ վերջինիս նկուղային հարկն ու ձեղնահարկը նախատեսվելու են, որպես շահագործման համար պիտանի մակերեսներ)*** վերհան սարքերով կամ վերելակով (***համապատասխան նորմատիվ փաստաթղթերով նախատեսվող այլ միջոցառումներ)***,

- բժշկական կենտրոնի համալրում էներգախնայող և էներգաարդյունավետ համակարգերով,

- համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտարիկ պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար,

- բժշկական կենտրոնի տարածքի բարեկարգում, կանաչապատում և լուսավորություն (այդ թվում վթարային կամ պահուստային լուսավորության համակարգով), անցուղիներ, բուժօգնության ավտոմեքենաների համար կայանատեղի կառուցում, ըստ անհրաժեշտության ***(եթե մասնագիտական եզրակացությամբ դրանք ենթակա կլինեն վերակառուցման կամ ապամոնտաժման)*** արտաքին հաղորդակցուղիների կառուցում-վերակառուցում և այլն ***(բաշխիչ կայաններ, ենթակայաններ, գազամատակարարման, ջրամատակարման, կոյուղու, ջրահեռացման ապահովման սարքեր-սարքավորումներ)***,

- գոյություն ունեցող անցումային սրահի և բակային տարածքում գտնվող օժանդակ շինությունների (փայտյա տնակի և ավտոտնակի) ապամոնտաժում:

d.Վերակառուցվող մասնաշենքում նախատեսվել են

- Պոլիկլինիկական ծառայություններ,
- Ընդունարան և անհետաձգելի բուժօգնության ծառայություն,
- Ախտորոշիչ և լաբորատոր բաժանմունք,
- 32 ստացիոնար մահճակալ ունեցող հիվանդանոցային ծառայություններ, ներառյալ՝ վիրաբուժական (8 մահճակալ), մանկաբարձագինեկոլոգիական (6 մահճակալ), թերապևտիկ մեծահասակների ու մանկական (14 մահճակալ) և ինֆեկցիոն (4 մահճակալ),
- Շտապ բուժօգնության ծառայություն 1 հերթապահ բրիգադի հաշվարկով,
- Ինտենսիվ թերապիայի սրահ (3 մահճակալ),
- Անհետաձգելի բուժօգնության ծառայություն (2 մահճակալ),
- Արյան պահպանման սենյակ,
- Օժանդակ ծառայություններ, ներառյալ՝ կենտրոնական ախտահանում, լվացքատուն, ներհիվանդանոցային դեղատուն, ինժեներական և մատակարարման ծառայություններ:

e. Ջրամատակարարման և ջրահեռացման տեխնիկական պայմաններ

Բնական ռեսուրսներից օգտագործվելու է միայն ջուր, որիծավալները հետևյալն են՝

1. Աշտարակի ԲԿ-ի գլխավոր մասնաշենք
   - սառը ջուր- 0,82 լ/վրկ
   - հակահրդեհային- 2,5լ/վրկ
   - տաք ջուր– 0,63լ/վրկ

- կոյուղի– 3,05 լ/վրկ

2. Պոլիկլինիկա
   - սառը ջուր – 0,48լ/վրկ
   - հակահրդեհային- 2,5լ/վրկ
   - տաք ջուր– 0,4լ/վրկ
   - կոյուղի–2,48լ/վրկ
3. Դիարան
   - սառը ջուր – 0,3լ/վրկ
   - հակահրդեհային- 2,5լ/վրկ
   - կոյուղի–1,9լ/վրկ
4. Կաթսայատուն
   - սառը ջուր 1,72լ/վր
   -

Վերակառուցվող հիվանդանոցային համալիրի ջրագծի միացման տրամագիծը d-100մմ, ճնշումը p-1.0 մթն, կոյուղագծի տրամագիծը d-300մմ: Միացման կետերը նախատեսել հարևանությամբ անցնող ջրագծից, իսկ կոյուղին՝ Գ.Նարեկացի փողոցով անցնող կոյուղագծին:

Համաձայն նախագծի՝ ջրաչափական հանգույցի տեղադրման կետում կառուցել դիտահոր, անհրաժեշտության դեպքում նախատեսել պոմպ: Հակահրդեհային հիդրանտի տեղադրման և կոյուղագծին միացման կետերում կառուցել դիտահորեր:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Նախատեսվող շինարարությունն իրականացվելու է Աշտարակ քաղաքի Նարեկացի 61 հասցեում:

Աշտարակ քաղաքին բնորոշ է չոր տափաստանային և տափաստանային գոտիներով լանդշաֆտը: Այն հատում է ինչպես հարթ, այնպես էլ բլրային և լեռնային մակերևույթով տեղամասեր: Ծովի մակերևույթից բացարձակ բարձրությունը 1090 մ է:

3.1.1. Երկրաբանություն

Տարածաշրջանի երկրաբանական կտրվածքի ձևավորման գլխավոր գործոնը հրաբխային Արագած լեռան վերին պալեոգենյան գործունեությունն է: Այն առավելապես դրսևորվում է անդեզիտա-բազալտային, անդեզիտա-դացիտային, տուֆոլավային հրաբխահոսքերով: Վերջիններիս արտաժայթքումների ընդմիջումների ժամանակահատվածներում, բազալտային լավահոսքերի միջև տեղակայվել-կազմագոյացել են հրաբխային լեզվակներ ու արտանետվածքներ՝ սերտաճած խարամա-մոխրա-պիրոկլաստիկ հրաբխանետվածքների հետ: Առանձին տարանջատված տեղամասերում, կտրվածքի ստորին հորիզոններում ի հայտ են գալիս լիպարիտապեռլիտ-օբսիդիանային, հաճախ նաև պեմզային արտանետվածքներ և լավահոսքեր: Լավային հոսքերն ունեն հիմնականում հարավային և հարավ-արևմտյան ուղղություններ: Դրանք գլխավորապես ծածկված են էրոզիոն գոյացությունների հաստ շերտով, որոնք պարունակում են կավա-բեկորային նստվածքագոյացումներ:

3.2. Կլիմա, օդի որակ և աղմուկ

3.2.1. Կլիմա

Արագածոտնի մարզի Աշտարակ քաղաքին բնորոշ է չոր ցամաքային կլիման: Հուլիսին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է 20-ից 24°C միջակայքում: Առավելագույն ջերմաստիճանը հասնում է 40°C և ավելիի: 10°C-ից բարձր ջերմաստիճանով օրերի թիվը 180-ից 200 է: Հունվարին օդի միջին ջերմաստիճանը տատանվում է -4-ից -6°C միջակայքում: Նվազագույն ջերմաստիճանը հասնում է -34°C-ի: Կայուն ձնածածկույթը պահպանվում է միջինը 1-ից 3 ամիս: Առանց սառնամանիքի օրերի թիվը տատանվում է միջինը 200-ից 240 օրերի միջակայքում: Տարեկան տեղումների քանակը կազմում է 300-400 մմ, որոշ դեպքերում՝ 400-500 մմ: Տարեկան գոլորշունակությունը 900-1100 մմ է և օդի միջին հարաբերական խոնավությունը տատանվում է 40%-ից (ամռանը) 75% (ձմռանը): Քամիների ուղղությունները հիմնականում հյուսիսային և հյուսիս-արևելյան են:

Լեռնային երկրներին հատուկ օրինաչափությամբ՝ ՀՀ-ում կլիմայական գոտիները փոխվում են ըստ բարձրության: Ներկայացվող տարածքի կլիմայական պայմանների նկարագրության համար օգտվել ենք ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. սեպտեմբերի 26-ի N167-Ն հրամանով հաստատված «Շինարարական կլիմայաբանություն”ՀՀՇՆ II-7.01-2011 փաստաթղթից:

Ստորև բերված աղյուսակներով ներկայացվում են տարածաշրջանի կլիմայական ցուցանիշները՝ մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը, օդի հարաբերական խոնավությունը, մթնոլորտային տեղումները և ձնածածկը, որոնք պետք

է հաշվառվեն ներդրումային գործընթացի բոլոր փուլերում՝ նախագծման, շինարարության և շահագործման ընթացքում:

Աղյուսակ 1.1. Մթնոլորտային օդի միջին ջերմաստիճանը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրություն ծովի մակարդակից, մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, C⁰												Միջին տարեկան	Բացարձակ նվազագույն	Բացարձակ առավելագույն
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	1090	-4,2	-1,3	-4,4	11,3	16,2	20,8	24,7	25,0	20,2	13,6	6,6	-0,5	11,4	-2,5	41

Աղյուսակ 1.2. Օդի հարաբերական խոնավությունը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով

	Բարձրություն ծովիմակարդակից, մ	Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %												Միջինտարեկան	Միջինամսականժ. 15-ին	
															հունվարին	օգոստոսին
		1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12			
Աշտարակ	1090	76	68	61	60	59	53	51	49	53	61	70	77	62	67	40

Աղյուսակ 1.3. Արևափայլի տևողությունը Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի,օդերևութաբանականկայանիանվանումը	Տևողությունը ըստ ամիսների, ժամ												**Տարեկանգումարային**
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	
1	**2**	**3**	**4**	**5**	**6**	**7**	**8**	**9**	**10**	**11**	**12**	**13**	**14**
Աշտարակ	120	152	183	203	255	320	362	332	295	230	151	94	2697

Աղյուսակ 1.4. Քամու պարամետրերը Աշտարակ քաղաքի օդերևութաբանական կայանի տվյալներով

Միջինտարեկանմթնոլոր-տային ճնշում,(հՊա)	Ամիսներ	Կրկնելիություն, % /միջինարագություն, մ/վրկ ըստ ուղղությունների								Անհողմությունների կրկնելիությունը,%	Միջինամսականարագությունը,մ/վ	Միջինտարեկան արագությունը,մ/վ	Ուժեղքամիներով (≥15մ/վ)օրերիքանակը	Հաշվարկայինարագությունը,մ/վ,որը հնարավորէմեկ անգամ "ո"տարիներիընթացքում		
		Հյուսիսային (Հս)	Հյուսիս-արևելյան (ՀսԱրլ)	Արևելյան (Արլ)	Հարավ-արևելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-արևմտյան (ՀվԱրմ)	Արևմտյան (Արմ)	Հյուսիս-Արևմտյան (ՀսԱրմ)					20	50	100
892,0	Հունվար	4	21	22	11	16	12	10	4	0	2.0	2,5	32	31	35	38
		1,6	2,0	2,2	2,3	2,0	1,8	2,0	2,1							
	Ապրիլ	4	18	23	12	15	13	11	4	0	2.7					
		3,7	2,8	2,6	2,8	2,8	2,7	2,9	2,8							
	Հուլիս	4	26	23	11	12	11	9	4	0	3.2					
		4,4	3,5	3,3	3,2	3,2	2,6	2,7	3,2							
	Հոկ-տեմբեր	4	24	26	12	13	10	9	2	0	2,2					
		1,7	2,1	2,3	2,4	2,3	2,1	2,1	2,2							

Աղյուսակ1.5.Տարվա տաք ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի,օդերևութաբանականկայանիանվանումը	Օդիջերմաստիճանը,"C					Ամենատաքամսվա օդիհարաբերական խոնավությունը,%		Մթնոլորտայինտեղումները,մմ		Քամի,մ/վ	
	Ապահովվածությամբ,%		Բացարձակառավելագույնը	Ամենատաքամսվամիջինառավելագույնը	Ամենատաքամսվամիջինօրականտատանումը	Միջինամսական	Միջինամսական ժամը 15-ին	Տեղումներիքանակապրիլ-հոկտեմբերին	Տեղումներիօրականառավելագույնքանակը	Գերակշռողուղղությունըհունիս-օգոստոսամիսներին	Միջինարագությունները ցնվազագույնը ըստուղղությունների հուլիսին
	0,95	0,99									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
Աշտարակ	32	33	41	32,0	13,3	49	40	224	56	Արլ.	3,3

Աղյուսակ1.6. Արեգակնային ճառագայթումը Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի,օդերևութաբա-նականկայանիանվանումը	Գումարային (ուղիղ և ցրված) ճառագայթումը հորիզոնական մակերևույթին անամպ երկնքի դեպքում, ՄՋ/մ^2												
	ըստամիսների												**Տարեկանգումարային**
	Հունվար	**Փետրվար**	**Մարտ**	**Ապրիլ**	**Մայիս**	**Հունիս**	**Հուլիս**	**Օգոստոս**	**Սեպտեմբեր**	**Հոկտեմբեր**	**Նոյեմբեր**	**Դեկտեմբեր**	
1	2	3	4	5	6	7	8	9	10	1	12	13	14
Աշտարակ	120	152	183	203	255	320	362	332	295	230	151	94	2697

Աղյուսակ1.7.Տարվա ցուրտ ժամանակաշրջանի կլիմայական հարաչափերը Աշտարակի օդերևութաբանական կայանի տվյալներով

Բնակավայրի, օդերևութաբա-նականկայանիանվանումը	Օդիջերմաստիճանը,°C										Ամենացուրտամսվաօդիհարաբերականխոնավությունը		Մթնոլորտայինտեղումներըևգրունտիսառչմանխորությունը		Քամի	
	ամենացուրտ օրվա		ամենացուրտհնգօրյակի		ամենացուրտժամանակաշրջանիմիջին	բացարձակնվազագույնը	ամենացուրտամսվամիջինօրական անտատանումը	Տևողությունը,օր			միջինամսական	միջինամսական ժամը15-ին	Տեղումներիքանակըմսական-նարտամիսներին,մմ	Գրունտիսառչմանառավելագույնխորությունը,սմ	Գերակշռողուղղություն	Միջինարագություններիցառավելագույնը/ցնցումայուղղություններիհամար/
	ապահովվածությամբ, %							Միջինջերմաստիճանը ժամանակաշրջանի միջինօրականջերմաստիճանով՝ ոչ բարձր,°C								
	0,98	0,92	0,98	0,92				0	8	10						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Աշտարակ	-20	-17	-19	-16	-4,3	-2.5	8,1	73 -2,7	143 0,6	159 1.4	76	67	158	70	Արլ	2,2

3.2.2 Օդի որակ

ՀՀ տարածքում օդային ավազանի ֆոնային աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ բնապահպանության նախարարության “Շրջակա միջավայրի մոնիթորինգի և տեղեկատվության կենտրոն” ՊՈԱԿ-ի (“ՀայէկոմոնիթորինգՀ”) կողմից:

2017թ.-ի ընթացքում օդային ավազանի որակի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Հրազդան, Ալավերդի, Արարատ, Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում, Սյունիք (Սովխոզ) գյուղում: Ընդհանուր առմամբ, վերը թվարկված բնակավայրերում տեղադրված է եղել պասիվ նմուշառման 220 կետև 16 մշտականդիտակետ:

Արագած սարի վրա գտնվող Ամբերդ կայանում գործում է օդի որակի չափման մեքենայացված կայան, որը հանդիսանում է Եվրոպական Մոնիթորինգի և Գնահատման Ծրագրի մաս:

Սակայն ազդակիր համայնքների տարածքում մշտական (ստացիոնար) դիտակայաններ կամ պասիվ նմուշառիչներ չեն տեղադրված և մթնոլորտային օդի աղտոտվածության վերաբերյալ “ՀայէկոմոնիթորինգՀ” -ում տվյալներ չկան:

3.2.3. Աղմուկ

Աղմուկի որոշակի բարձրացում սպասվում է շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ:

Աղմուկի ներկայիս մակարդակի ուսումնասիրման նպատակով, 2010 թվականի հունիսի 4-ից մինչև 10-ն ընկած ժամանակահատվածում կատարվեցին աղմուկի չափման աշխատանքներ վերոնշյալ համայնքներում: Յուրաքանչյուր համայնքում չափումները կատարվեցին երկու կետում. առաջին՝ ճանապարհի անմիջապես եզրին, երկրորդ՝ ճանապարհից 20մ հեռավորության վրա, դեպի համայնք ուղղությամբ:

Աղյուսակ Աղմուկի սահմանային թույլատրելի մակարդակները

Շենքերի և տարածքների նշանակությունը	*Օրվա ժամանակը (ժամ)*	*Չայնի առավելագույն մակարդակները Լանձայնի համարժեք մակարդակները ԼաէկվդԲԱ*
Բնակելի շենքեր, պոլիկլինիկաներ, ամբուլատորիաներ, դիսպանսերներ, հանգստյան տներ, պանսիոնատներ, ծերերի և հաշմանդամների համար տուն-	06.00 ~ 22.00 22.00 – 06.00	55 45

ինտերնատներ, մանկապարտեզներ, դպրոցներ և ուսումնական այլ հաստատություններ, գրադարաններ շենքերին անմիջապես հարող տարածքներ

Ծանոթություն: Աղմուկից պաշտպանված տեսակի բնակելի շենքերի պարսպող կառուցվածքներից 2մ հեռավորության վրա, քաղաքային և շրջանային նշանակության հիմնական փողոցներին և երկաթուղային գծերին հարող հյուրանոցների և հանրակացարանների շենքերում, տարածքներումավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտից առաջացող աղմուկի համարժեք և առավելագույն մակարդակները դԲԱ-ով թույլատրվում է ընդունել նշված մեծություններից 10դԲԱ-ով ավել (ուղղում=+10 դԲԱ):

Աղբյուրը: ՀՀ ԱՆ հրամանը“Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում” N2-III-11.3 սանիտարական նորմերը հաստատելու մասին, հրաման N138, 6 մարտի, 2002

3.3 Սոցիալ-տնտեսական պայմանները

Աշտարակ քաղաքը Արագածոտնի մարզի ամենախոշոր քաղաքն է, բնակչությունը՝ 16.9 հազ. մարդ:Գտնվում է Քասախ գետի ափին, Երևանից 19 կմ հյուսիս-արևմուտք: Քաղաքը հանդիսանում է Երևան-Գյումրի, Երևան–Սպիտակ ճանապարհների հանգույցը: Քաղաքը զարգացել է որպես Երևան քաղաքի արբանյակ քաղաք: Այն մարզի վարչաքաղաքական, տնտեսական, գիտական ու կրթամշակութային կենտրոնն է: Աշտարակ քաղաքի տնտեսության առաջատար ճյուղը սննդամթերքի և ըմպելիքի արտադրությունն է:

Նկ. 1. Աշտարակի բժշկական կենտրոնի իրադրային սխեման


ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:500
ГЕНПЛАН М 1:500
Հիվանդանոց
1339 մ²
Կաթսայատուն
38 մ²
Դիարանի հեռանկարային տեղակայման առաջարկ
Պոլիկլինիկա
620 մ²
0.000 =1114.45
1114.30
1114.45
1113.60
1113.45
1112.63
1112.50
1112.55
1112.40
1113.20
N

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Ռիսկերի գնահատում

Նախատեսվող գործունեության իրականցման ժամանակ շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, սակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:

Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Քանդման ընթացքում /գոյություն ունեցող շինության միջնորումներ, հատակ, տանիք և այլն/,
- Նորկառուցվող շենքերի շինարարությանընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինաղբի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- Բետոնային աշխատանքների իրականացմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ,
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Օդի աղտոտում

Վերկառուցվող շենքերի շինարարության ընթացքում հիմնականում կանխատեսվում է օդի աղտոտում՝ պայմանավորված հողային աշխատանքների ընթացքում անօրգանական փոշու և ծխագազերի ժամանակավոր արտանետումներով, որոնք առաջանում են առկա

շինությունների մի մասի քանդման, նոր շենքերի կառուցման հողային աշխատանքներից և տեխնիկական միջոցների աշխատանքից՝ դիզվառելիքի աշխատանքի դեպքում:

Շինարարության ընթացքում արտանետումները կլինեն տեղայնացված, ենթակա արագ ցրման և ժամանակավոր՝ հաշվի առնելով շինարարական աշխատանքների ժամանակավոր բնույթը: Հնարավոր վնասակար ազդեցությունները կբացառվեն կամ կնվազեցվեն բնապահպանական կառավարման պլանում ներկայացված միջոցառումների իրականացման դեպքում, մասնավորապես՝ փոշու արտանետումները նվազեցնելու համար կիրականցվի շինհրապարակի պարբերաբար ջրցանում, շինանյութ տեղափոխող մեքենաների երթևեկությունը կկազմակերպվի թափքի ծածկման պայմաններում, ինչպես նաև կիրականացվի շին հրապարակ մուտք գործող և լքող մեքենաների անվադողերի լվացում:

Հարակից բնակելի և հասարակական շենքերից բողոքների դեպքում կիրականացվի նաև օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն օրենսդրական նորմերի և ելակետային տվյալների հետ:

4.3 Աղմուկի և թրթռումների ազդեցություն

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակինհարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը: Հարակից տների և շենքերի բնակչության հնարավոր բողոքների դեպքում կիրականացվեն աղմուկի և թրթռումների մակարդակների գործիքային չափագրումներ, իսկ շինարարության ընթացքում որպես կարևորագույն միջոցառումներ, անհրաժեշտ է՝

- Խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են՝ մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքները հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:
- Բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;

4.4. Ջրօգտագործում և ջրային համակարգերի վրա ազդեցություն

Շինարարական աշխատանքների ընթացքում ջուրը հիմնականում օգտագործվելու է շինհրապարակի ջրցանման, մաքրման և որոշ շինարարական աշխատանքների իրականացման համար, ինչպես նաև աշխատակազմի կենցաղային կարիքները հոգալու նպատակով: Անհրաժեշտ ջրաքանակը շին հրապարակ կմատակարարվի տարածքում գոյություն ունեցող ջրամատակարարման ցանցից:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Շինարարությունը իրականացնող անձնակազմը օգտվելու է ժամանակավոր տնակներից:

Ջրամատակարարումը և ջրահեռացումն իրականացվելու են քաղաքային ցանցերին միանալուց հետո: Այդ միացումները կատարվելու են առաջնահերթ:

4.5. Բնապահպանական միջոցառումներ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.5.1. Մթնոլորտայինօդ

- Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,
- Սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,

- Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
- Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումն իրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
- Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:

4.5.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Բետոնի խառնուրդի պատրաստման համար օգտագործել տեխնիկական որակի ջուր՝ տարածքում առկա ոռոգման ջրացանցից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

4.5.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որը ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ընթացքում կառաջանա 2340տ ծավալով շինարարական աղբ, որը կտեղափոխվի Աշտարակի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,
- Հանված հողային գրունտները՝ 1090մ^3, պահեստավորում են թույլատրված վայրում, անհրաժեշտության դեպքում ետլիցք, կամ ավելցուկի օգտագործում տարածքի բարեկարգման նպատակով

  Շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել:

<u>Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝</u>

- Շինհրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Վտանգավոր թափոնների հանձնում ընկերությունների, որոնք ունեն վտանգավոր նյութերի վնասազերծման, կամ տեղակայման արտոնագիր,

- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.5.4. Աղմուկ

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկայի միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել բարձր աղմուկ ունեցող մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում տեղադրել խլացուցիչներ:

4.5.5. Կենսաբազմազանություն

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Աշտարակ քաղաքի բնակեցված և կառուցապատված թաղամասում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

<u>Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով բնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝</u>

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- Շինհրապարակում խուսափում՝ շինարարական ու կենցաղային աղբի այրումից և կուտակումից,
- Շինարարական աշխատանքների վերաբերյալ մոտակա բնակչությանը իրազեկում, որոնց արդյունքում կարող են ավելանալ փոշու քանակները, աղմուկի մակարդակը և ժամանակավորապես փակվեն ճանապարհները,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.

- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպում և իրականացում:

4.5.6 Թափոնների և այլ նյութերի կառավարում

Հիմնական թափոնատեսակը, որը կառաջանա հիվանդանոցային համալիրի վերակառուցման ընթացքում, դա շինարարական աղբն է, որը կառաջանա ինչպես առկա հիվանդանոցային համալիրի քանդման, այնպես էլ նոր շենքի կառուցման աշխատանքներից:

Շինությունների քանդման արդյունքում կառաջանա մեծ ծավալով տարբեր տեսակի շինարարական աղբ և թափոններ, որոնց մի մասը կօգտագործվի շինարարական աշխատանքների համար, իսկ մնացածը կհեռացվի համապատասխան աղբավայրեր:

Նախատեսվող գործունեության ընթացքում վտանգավոր թափոնների առաջացում չի կանխատեսվում: Աշխատանքների ընթացքում քսայուղերի, հեղուկ վառելիքի հնարավոր մնացորդային քանակների առաջացման իրավիճակում նախատեսվում է նշված նյութերը պահել հատուկ անթափանց և փակ տարաներում, որոնք հետագայում որպես երկրորդային նյութ կվերաօգտագործվեն շինարար կապալառուի կողմից այլ աշխատանքներում, կամ պայմանագրային հիմունքներով կհանձնվեն այդ թափոնները վերամշակող կազմակերպություններին:

4.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

4.7 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլորտի աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:
- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հագեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկղիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժ.օգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:
- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:
- բոլոր աշխատողներին տրվելու են անհատական և կոլեկտիվ պահպանության միջոցներ: Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժ.օգնություն:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

4.8 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցությանը: Շինհրապարակի համար մշակվելու է տարածքների վերականգնման, կանաչապատման և բուսականության վերականգնման պլան: Կանաչապատման աշխատանքներն իրականացվելու են նախագծման առաջադրանքի պահանջներին և տարածքի համար մշակվող տարածքի կանաչապատման սխեմային համապատասխան: Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը նախատեսվում է բարեկարգել և ռեկուլտիվացնել: Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախագծային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլիմասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողու-թյունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխա-նատուն	Մոնիթորինգի պատասխա-նատուն
Նախագծային փաստաթղթերի պատրաստում Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությունները Աշխատողների, Ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն	Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնքանհրաժեշտէ հաշվիառնելաշխատանքայիննախագծում, ԲԿՊ-ի բնապահպանական պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:	- Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում: - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Տարածքում առկա ինժեներական ենթակառուցվածքների անջատման, կամ տեղափոխման վերաբերյալ թույլտվության ձեռք բերում, սեփականատիրոջ հետ համաձայնեցում Խստագույնս պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային նորմերը - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ)	Շինարարության կապալառու Կապալառու	Տեխնիկական վերահսկող Աշտարակի քաղաքապե-տարան

		- Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:		
Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ պշինարարական աշխատանքներ	Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;	- Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում՝ փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Գոյություն ունեցող շինությունների վերակառուցման, նոր մասնաշենքերի կառուցման և շինությունների քանդման աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվենտարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարականտրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի	Շինարարության կապալառու	Տեխնիկականվերահսկող, Աշտարակիքաղաքապե-տարան Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք է տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից՝ դեռ շինհրապարակում և ըստ առաջացման՝ տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր:	Շինարարության կապալառու	Տեխնիկականվերահսկող, Աշտարակի քաղաքապե-տարան

	նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ:	- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով՝ նախատեսվածին համապատասխան - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել		
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին: Կիրականացվեն մակարդակների չափագրումներ ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;	Շինարարության կապալառու	Աշտարակիքաղաքապե-տարան
Շինհրապարակի վերականգնում		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ կապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Մշակել ընդունման-հանձնման ակտի ստուգաթերթիկի բոլոր պահանջները;	Շինարարության կապալառու	Աշտարակի քաղաքապե-տարան

Մեղմացնող միջոցառումների ինդիկատիվ արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտ 1,2%

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆՐԻ/ ՊԼԱՆ

Գործողություն	**Նվազեցնող միջոցառումներ**	**Որտեղ իրականացնել**	**Ինչպես իրականացնել**	**Ժամանակամիջոց**	**(ո՞վ է իրակա-նացնում մոնիթորինգը)**
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս, Աշտարակ քաղաքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Վտանգավոր նյութերիևթափոննե	Վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի	Շինհրապարակ	Շինհրապարակի զննում	Շինարարաության ընթացքում	ՀՀ քաղաքաշինության

րիկառավարում	Պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր				կոմիտե
Շինարարական հրապարակի բարեկարգում	Շինարարական հրապարակի ժամանակավոր պահեստի /բետոնախառնիչի/ ապամոնտաժում, և տեղանքի բարեկարգում - Շինհրապարակի վերջնական մաքրում, տարածքի բարեկարգում և վերականգնում	Շինարարական հրապարակ, ժամանակավոր պահեստներ	Ստուգման գործընթացներ	Շինարարության ավարտական փուլ	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Շինհրապարակի վերականգնում և տարածքի բարե-կարգում	- Շինհրապարակը մաքրված է, նյութերը և թափոնները հեռացված են, - բոլոր մակերեսները, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնված են, - շինհրապարակի տարածքը բարեկարգված է	Տեղամասեր Կատարած Ստուգայցեր	Շինհրապարակի զննում Ստուգայցեր	Շինարարության ավարտին	ՀՀ քաղաքաշինության կոմիտե ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանականգնահատմանևուսումնասիրությանշրջանակ:
- ՇինարարականԿլիմայաբանութուն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011ՀՀքաղաքաշինությաննախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Նհրաման:
- Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
- Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf
- ՀՀԿառավարությանորոշում N 1325-Ն «Հանրայինծանուցմանևքննարկումներիիրականացմանկարգըսահմանելումասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- Www.arlis.am
- Www.atdf.am
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL:https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին: